

## ՓՈՔԸ ԱՐՄՏԱՆԻ ՄԵԾ ՎԿԱՆ

### ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՑԱՆ

Հողվածում նախորդ դարի մամուլի, գրողի կենսագրական նյութերի ու գեղարվեստական ստեղծագործությունների հիման վրա առաջին անգամ համապարփակ ներկայացվում է սփյուռքահայ գրականության դասական հեղինակ Հակոբ Մնձուրու կյանքի առաջին շրջանը, որն ընդգրկում է նրա՝ ծննդավայրում, ապա Կ. Պոլսում և նորից իր հայրենի գյուղում գտնվելու տարիները (1886-1914): Փաստական և գրականագիտական հիմնավորումներով ներկայացվում են Արևմտյան Հայաստանի Երզնկա գավառի, նրա մի շարք գյուղերի և հատկապես Արմտանի ու նրա բնակիչների կյանքի ու կենցաղի, ազգային սովորույթների, մարդկային հարաբերությունների վերակերտումները մնձուրիական գրականության մեջ, ինչպես նաև գրողի կյանքի այն ընթացքը, որ նա ունեցավ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը: Ինքը՝ Մնձուրին, մի գյուղացի էր, որի դառնալից կյանքն իրենով արտացոլեց նաև հայ ժողովրդի մի մեծ հատվածի ողբերգական ճակատագիրը:

Պատանի Հակոբի կյանքի հյուսքով հողվածում վեր է հանվում նրա ապրած օրերի այն բազմահարուստ ու բազմերանգ շրջանակը, որը մաս առ մաս ձևավորեց ապագա մեծ գրողին, այն գրողին, որ վերջին վկան դարձավ այլևս չգոյ մի երկրի, որտեղ ապրում էին խաղաղ մարդիկ, և որոնք կյանքի իմաստը տեսնում էին արարման ու աշխատանքի մեջ, փայփայում կյանքի խաղաղ ընթացք:

Հողվածը պարունակում է արևմտահայոց մի հատվածի կյանքին վերաբերող հարուստ նյութ, որը մեկնելի է դարձնում Հակոբ Մնձուրու գործերի գաղափարական և գեղարվեստական արժանիքները, այն գրականությունը, որ ընդգրկում է Մնձուրու խոսքերով ասած՝ «Գյուղս, էս, հողս, մենք»:

**Բանալի բառեր** – *Հակոբ Մնձուրի, վկայաբանություն, Արմտանի այգիներ, ազգապահպանություն, 20-րդ դարի արևմտահայ գրականություն, պատկերակերտում*

«Գյուղս, էս, հողս, մենք».- Հակոբ Մնձուրու այս խոսքերը լավագույնս են բնութագրում նրա ողջ գրականությունը: Դեռևս Կ. Պոլսում ուսանելու տարիներին կասմացի հայ պանդուխտները նրան հարցրել էին.

« - Իգնատիուսի տղան, Ակոբը դո՞ւն էս...

- Այո, ըսի:

- ... Ղալաթիա, Կեդրոնականը ձգեցիր, հիմա ալ քեզ Բոպերթ գոլեճ պիտի դնեն, *նայինք շատ կարդալով ինչ պիտի ըլլաս*», որին պատասխանել էր. «Նորեն Արմտան պիտի երթամ, արմտանցի մը պիտի

ըլլամ, արտ պիտի վարեմ, բեռ պիտի բեռնամ...»<sup>1</sup>: Բայց զարգացող դեպքերը բոլորովին չարագուշակ եղան նրա համար:

Նա եղավ այն գրողը, ում համար ներկա գոյություն չունեցավ. ամեն բան և ամենքը անցյալ դարձան, և եթե ներկա էլ կար, այն յուրատեսակ ներկա էր անցյալից մնացած պատատիկ, հուշ ու հիշատակ: Ինքը՝ Մնձուրին էլ գիտեր, որ իր գրականությունը նման չէ և ոչ մի այլ գրականության, ինչպես որ իր կյանքը բացառիկ էր ու նման չէր ոչ մեկի կյանքին: Նա պատմելու էր *«տեղե մը»*, որ *վերահաս եղեռնի պատճառով այլևս չկար, չկային նրա պատկերած մարդիկ ու իրականությունը*: Եվ նրա պատմվածքները միայն պատմություն չէրան, այլև ազգագրություն, ազգային պատմություն, վկայաբանություն: *«Ես զիս պատմեցի ու ինձնով իմ հայրենի շրջապատս պատմեցի: Իմ անձերս ու անոնց աշխարհագրությունը: Ազգագրությունը հայեցուցի իմ պատմություններուս մեջ»*<sup>2</sup>: Պատմություններ, որոնցում վերոհիշյալ վկայությունը գրեթե սպառիչ ամփոփում է այն ընդգրկումներն ու առանձնահատկությունները, որոնք բնորոշ են Մնձուրու գրականությանը: Մենք ուզում ենք ասվածի մեջ հատկապես ընդգծել երկու միտք. նախ՝ այդ գրականությունը **վկայաբանությունն** է մեր ազգային կյանքի որոշ շրջանի պատմության, և երկրորդ՝ Մնձուրին իրեն ու իր հայրենի շրջապատը *«հայեցուցել»* է իր պատմությունների մեջ, որ նշանակում է մերել, ձուլել, հյուսել, ասել է՝ ահա այն բովանդակությունը և այն ձևը, որ ներկայացնում է այդ գրականությունն իր ամբողջության մեջ:

Գրեթե բոլոր գործերում, տեսանելի թե ոչ, որպես գործող անձ ներկա է ինքը՝ Մնձուրին՝ մերթ որպես վկա, մերթ՝ ականատես, մերթ՝ վերհիշող, մերթ՝ մասնակից, մերթ՝ կողքից դիտող: Արդյունքում ստացվում է յուրատեսակ մի ինքնակենսագրություն, որտեղ հեղինակը գրում է որքան այլոց, նույնքան էլ իր մասին: Այդ ներկայությունը ընթացող դեպքերին հավաստիություն է հաղորդում, համոզիչ դարձնում ասվածը, ընթերցողին մասնակից դարձնում գործողություններին մինչ այն աստիճան, որ նա գրողի գրուցակիցն է դառնում, «ստիպված լինում» *«պատասխանել»* հեղինակի՝ իրեն ուղղված այն հարցումներին, թե *«Դուն կճանչնա՞ս ս», «Դուն աս տեղերը եղա՞ծ ես», «Դուն գիտե՞ի՞ր», «Կարելի է չէք հաւատար», «Հո՛ն որ գալու ըլլաս...», «Ես ըլլայի, դուք ըլլայիք մտքերնուս կրրնայի՞նք անցրնել»:*

Մնձուրին գրել է առանց դադարի՝ Արմտանի այգիներում ու ձորերում եղած ժամանակ, Պոլսում դեպի փուռ աշխատանքի գնալիս և վերադառնալիս (անգամ ձեռքի ափերին), հարդ, խոտ ու ածուխ ծախելիս, մոմ վաճառելիս, *«պարսպ պտտելու»* ժամանակ, հաշվեկալ ու *«դագ-*

<sup>1</sup> **Յ. Մնձուրի**, Տեղեր ուր ես եղեր եմ, Բաթանպուլ, 1984, էջ 141: Այսուհետև այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն տեքստում, կնշվեն միայն վերնագիրն ու էջը:

<sup>2</sup> «Բագին», Բեյրութ, 2021, թիւ 1, էջ 65:

*գահտար»* աշխատելիս: Եվ երբ ինչ-ինչ պատճառներով չի գրել, իրեն պատվանդանի վրա տեղադրված անշարժ արձանի է նմանեցրել:

Մնձուրին, շատ քիչ բացառություններով, իր գործերում պատկերում է Երզնկա\* գավառի\*\* կյանքը, ավելի նեղ առումով՝ Եփրատի աջ ափին գտնվող փոքրիկ Արմտան\*\*\* գյուղի կյանքը: Այդ «նեղ» սահմաններում իրականում նա ներառում է անպարփակելի ողջ Արևմտահայաստան աշխարհն ու նրա մարդկանց:

«Արմտանի այգիները» գործում Մնձուրին շատ որոշակի է գծագրում իր ծննդավայր Արմտանի\*\*\*\* աշխարհագրությունը: Արմտանը մի վայր էր, որ հիմնականում բաղկացած էր խորը կիրճերից ու ձորերից, երկինք հատնող լեռներից, որտեղ ասես «*Երկինքեն քար թափեր են*», և կամ «*քարերու հեղեղ մըն են*», Մնձուրու խոսքերով ասած՝ ո՛չ «*արտ կշինվի*», ո՛չ «*եզ կբերվի, կլծվի*», ո՛չ «*արտ կբանի*»: Խոսելով իր այդ երկրի մասին՝ «Արմտան» գործում գրում է. «*Մեր ամեն լեռան էտերը նորեն լեռ է, անոր էտերը նորեն լեռ*»<sup>3</sup>: Սրան ավելացնենք և այն, որ թեև ձորերով հոսում էին գետեր, բայց բարձունքներում, որտեղ ապրում էին մարդիկ, աղբյուրներն աղի էին, և գյուղացիները հաճախ հեռուներից ավանակներին բարձած կժերով էին խմելու ջուր բերում:

Շարունակելով խոսել իր գյուղի մասին, որը գտնվում էր Եփրատի ափին, իսկ ավելի ստույգ՝ նրա Ղորուչայ (Չորգետ) վտակի\*\*\*\* անմիջական դրկիցությամբ՝ Մնձուրին իր «Սիլա» պատմվածքում գրում է. «*Ճամբուն երկու կողմը՝ աջը, ձախը, դեպի վեր, դեպի վար, մինչև շուրջանակի բլուրներու ստորոտը ցանված էին, ափ մը պարասպ գետին չկար: Ամբողջը ցորենի արտեր էին: Մեջ ընդ մեջ գարիի ու վիկի, այսինքն վայրի ոսպի: Ամենքն ալ մաս-մաքուր էին, ամենուն ալ քաղիանքը եղած էին, մեկ հատիկ խոտ չկար*»<sup>4</sup>:

Հին եգիպտացիները դրախտը պատկերացնում էին Խապի (Նեղոսի հին անվանումը) գետի ափերին գտնվող մի ծառաստան-եղեգնուտ, որտեղ կարելի էր ազատ ապրել, որս անել, պարել ու ուրախանալ: Այդպիսի մի «*ծառաստան-եղեգնուտ*» էր Մնձուրու համար իր Արմտանը, ավելի լայն իմաստով՝ Արևմտահայաստանը, որտեղ ապրելն ու արարելը կյանքի գերագույն իմաստն ու նպատակն էին:

\* Երզնկան թուրքերը դարձրել են Էրզինջան:

\*\* Այդ բնակավայրը և հարակից տասնյակ այլ բնակավայրեր հիշատակվում են դեռևս հին շումերական, խեթական արձանագրություններում:

\*\*\* Մ. Մեծարենցի գյուղը Բինկյանը, որը նույնպես Եփրատի աջ ափին էր, Արմտանից ոտքով երկու ժամվա հեռավորության վրա էր գտնվում, Մնձուրու խոսքով. «... ձեռքդ մեկնեիր, նե կհասներ»:

\*\*\*\* Գոյություն ունեին երկու Արմտաններ՝ վերի Արմտան, վարի Արմտան: (Այդպես նույն անունով գոյություն ունեին, օրինակ, Ուխտիկներ գույգ գյուղերը): Վարի Արմտանը փոքր Արմտանն էր, Մնձուրու գյուղը, որի չորս գերդաստան իրենք Տեմուրճենք էին:

<sup>3</sup> **Յ. Մնձուրի**, Կապոյտ լոյս, Իսթանպուլ, 1958, էջ 90:

\*\*\*\*\* Եփրատի այդ վայրերով հոսող վտակներից մեկն էլ Ղարապուտախ (Մն ճյուղ) գետն էր:

<sup>4</sup> **Հ. Մնձուրի**, Երկեր, Եր., 1986, էջ 379: Այսուհետև այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն տեքստում, կնշվեն միայն վերնագրին ու էջը:

Հենց այդպես էլ մնա՞նք հայկական ողջ գրականության մեջ արժանաբար ու պանծացվում են իր երկիրն ու նրա մարդիկ, որն այլ բան չէ, քան հայրենիք ասվածը, որը, ըստ Մնձուրու, ամեն հայկականն է, ամեն բարին ու արդարը, հայրենի հող ու ջրի քաղցրությունները: Այդ ամեն հայկականն էլ Մնձուրու գրականության մեջ մեծանում է, դառնում ընթերցողինը, ուրիշներինը, աշխարհինը, դառնում հայ բարձր ոգու ու ժողովրդի հարատևության և ինքնության մասին ասված անգնահատելի խոսք: Այդպես Կոստան Զարյանը ևս անքակտելի կապ էր տեսնում հայ մարդու և բնության միջև. «Հայ մարդու համար բնությունը գերազանցապես հայրենիք է: Երբ նրանք մեկը մեկին կորցնում են, երկուսն էլ մնում են որբ, թառամում... չորանում»<sup>5</sup>:

Արևոտ ու լուսերով լեցուն այդ երկիրը թեն լեցուն էր բազում հոգս ու դժվարություններով, սակայն Մնձուրին այն ներկայացնում է որպես ցանկալի մի վայր, քանի որ կատարված մեծ չարիքը համեմատության եզրեր չէր թողել, խավարով, ամայության մեջ արյամբ էր պատել մի ամբողջ աշխարհ, որ համահունչ էր *չկա* բառին, որի պարագայում թերություններն անգամ քաղցր հուշեր էին դարձել: «Ապրեցրել եմ այն, որ չկա այլևս հիմա, - գրել է Մնձուրին: - Չերգիծեցի: Բնչո՞ւ չընէի» (Տեղեր, էջ 209):

Մնձուրին երբ գրում էր իր պատմվածքները, ոչ այդ մարդիկ կային և ոչ էլ նրանց Երկիրը: Բայց արդյո՞ք չկային: Մնձուրու գրականությունը գալիս է ասելու, որ նրանք անանց են, կան, *ասյրում* են: Եվ այդ *հայրությունը* այդ գրականության միջոցով հարատևություն է ստանում, արևմտահայ մարդը, որ հիմնականում գյուղաբնակ էր, իր հող ու ջրի հետ էր հավերժության ուղեկիցը դառնում: Մի գրականություն, որ, ապրեցնելով հանդերձ նախնիների հիշատակը, միտված էր ազգապահպանմանը, մանավանդ նոր ժամանակներում և նոր պայմաններում:

Մնձուրին, որ ապրեց 92 երկար ու ձիգ տարիներ, հայրենի ծննդավայրում բնակվեց հազիվ 19-20 տարի՝ 1886-1897 և 1907-1914, մնացած 72 տարիները ընթացան հայրենի հող ու ջրից դուրս՝ Կ.Պոլսում: Բայց Մնձուրին միշտ ու հարատև մնաց իր կորսված եզերքի նվիրյալն ու կարոտյալը, դեռ ավելին՝ նրա՝ այդ Մեծ բացակայի Մեծ բնակիչը, նրա մշակը, որի վերաբերյալ հաստատեց. «Գյուղացին չերթար մեջես»: Ուրեմն պատահական չէ, որ գրում էր. «... ես... իմ անձերս, իմ երկիրս խօսեցուցի»<sup>6</sup>: Հենց դրա համար էլ նրա գրականությունը մի տևական *սիլա* (տունդարձ) դարձավ, *անընդհատ վերադարձ ու նորոգում իր Երկրի ու նրա մարդկանց, հայրենի հողի ու բնաշխարհի*, որոնց մեջ, իր բառերով ասած, նա «խառնել է» տեղագրություն, բարքագրություն, բանահյուսություն ու ժողովրդագրություն, ստեղծել յուրատեսակ *համանկար*, իր խոսքով. «Բառերով նկարչություն ըրի», որտեղ «... դեպք, տոսմ

<sup>5</sup> «Հայրենիք» ամսագիր, թիվ 1, Բոստոն, 1936, էջ 43:

<sup>6</sup> **Հ. Մնձուրի**, Մենք, Անթիլիաս, 2018, էջ 365: Այսուհետև այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն տեքստում, կնշվեն միայն վերնագրին ու էջը:

չկան... կամ գրեթե չկան»<sup>7</sup>, ու նաև այդ ամենի հետևանքով է, որ նրա շատ պատմվածքներում «բացակայում» է պոմեի զարգացումը, և «երկրորդական» է դառնում ստեղծագործության բովանդակությունը, ավելի ճիշտ՝ բովանդակությունը գալիս է հետո: Ավելին, Մնձուրին իր պատմվածքները գրում է, այսպես ասած, «քեզ հետ խոսելու պես», որի արդյունքում առանձին պատմվածքներ, որոնք հազիվ երկու-երեք էջից են բաղկացած, դեռ չսկսած՝ ավարտվում են, որոնցից ընթերցողի հիշողության մեջ մնում են հազիվ մեկ-երկու «անկարևոր» դեպքերի կամ իրադարձությունների անդրադարձներ: Դրան հակառակ՝ անանց են մնում Մնձուրու կերտած մարդկային տիպերն ու պատկերակերտման բազմերանգությունները, որոնցով լեցուն են նրա բոլոր պատմվածքները, որոնց խորքը հայրենի հողն է, նրա աղն ու համը հանդիսացող հայ մարդն ու նրա աշխատանքը:

Խոսելով շրջանի գրական ըմբռնումների ու առաջադրանքների մասին՝ Մնձուրին իր «Սիրահարություն մը» պատմվածքում գրում է. «Մենք բոլորս ալ հավատավորներն էինք այն շարժումին, որ այդ օրերուն մեր գրականության մեջ ձև ու կյանք առնելու վրա էր, թե հայ արվեստը իր բոլոր ճյուղերովը, ընդ որս և գրականությունը **որպեսզի կարենա ցեղին հոգին ցոլացնել, յուրահատուկ գեղեցկությունները երևան հանել, բնագավառեն ներշնչվելու, անկե առնելու է իր ավիշը, անոր հողեն ծնելու է, արդպիտով միայն կենսունակ, բաբախուն, ինքնատիպ, նույն ստեն խորապես մարդկային կարենալ դառնալու համար: Ու ասոր համար պետք է դիմել, մոտենալ բուն իսկ ակին, առավելապես գյուղին, ապրիլ հոն, ճանչնալ ու սիրել զայն» (ընդգծ. – Ա. Ա.) (Կապույտ լույս, էջ 129):**

Եվ սա լոկ նախասիրության փաստում չէր, այլև գրական մանիֆեստ հենց իր համար, առաջադրանք ու նպատակ, որն իրականություն դարձավ նրա գրականությամբ: Եվ պատահական չէ, որ Մնձուրին դարձավ ոչ միայն դեպի հայրենի բնաշխարհ շարժման նվիրյալներից մեկը, այլև այն իրականացնողներից մեկը:

«Իմ ապրած ու եղած տեղերուս մարդիկը կպատմեն» վկայությունը հենց այն առաջադրանքն է եղել, որին հավատարիմ մնաց գրողը մինչև վերջ:

Այստեղից էլ հառնում էին Մնձուրու հերոսները, որ իրենց հայրենի բնաշխարհին ձուլված մարդիկ են՝ իրենց էությամբ այդ բնության նման բարի ու արարող, ազնիվ ու շիտակ, լեցուն ազգային ինքնության հատկանիշներով: Ստեղծագործական ողջ շրջանում «գյուղը տալը», «գյուղը պատմելը» Մնձուրին բացատրում է ոչ միայն «անոր անհետացմամբ», այլև նրա «շարունակումը» շարունակելու անհրաժեշտությամբ ու գիտակցությամբ:

<sup>7</sup> **Զ. Մնձուրի**, Կապույտ լույս, Եր., 1968, էջ 11, 13: Այսուհետև այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն տեքստում, կնշվեն միայն վերնագիրն ու էջը:

Եվ ուրեմն, Մնձուրու գրականությունը *վերադարձ* է այն ժամանակները, որտեղից նա եկել էր, *վերհիշումը* այն դեպքերի, որոնց միջով անցել էր ինքը, *վերապրեցումը* այն ամենի, որ կապված էր հայ անվան հետ: Մի արձակ, որ գեղանկարչություն էր ու կարոտ, սրտի մորմոք, և որը ներկայացված իր մարդկային տիպերով արտացոլում է արևմտահայ մարդուն բաժին հասած թե՛ ուրախ ու կենսախիղ, թե՛ դառն ու անել ճակատագիրը, ենթատեքստում բացահայտելով նաև այն վայրիվերումները, որոնց մեջ գտնվում էր 20-րդ դարի արևմտահայ գավառը թուրքական բռնապետության ներքո:

Մնձուրու համար գյուղը պատկերելը նեղ առումով *աշխարհը գրելն* էր, լայն առումով՝ *իր Երկիրը գրելը* և իր ընթերցողին այդ երկիր տանելը, որտեղ և նրան «պտտեցնում» է, ալոճի աշնանային ծառերի տակ նստեցնում, ճնճղուկներ փախցնող մանուկների «լէ-լէներուն» ձայնը լսել տալիս, վաղ առավոտ գյուղացի Շիրինի նման սառնորակ աղբյուրից մի քանի կաթիլով ցողում դեմքը՝ իբր թե լվացվեց.... Արդյունքում այդ գրականությունը, որ կարոտի խոսք է ու մորմոք, հնչում է որպես *վերադարձի* երգ ու վերագտման մեղեդի, նպատակ ու ոգեկոչում, այլ խոսքով՝ երկիրը վերապրեցնելը, նրան հարություն տալը, մարդու հայ տեսակի բացահայտումը, նրա բարոյական բարձր որակների վերհանումն իր խորքի մեջ հակադրումն են դառնում մարդասպան մարդու տեսակին՝ թուրքին: Կար և մի ուրիշ նպատակ. փաստել ու վկայել գյուղի՝ մի ողջ եզերքի անհետացումը, կարոտաբաղձություն արթնացնել նրանց նկատմամբ, պանծացնել «չգոյ» հայրենիքի գաղափարը:

Մնձուրու կյանքը ինքնին գրական նյութ է առնվազն երկու առումով. մեկ, որ այն ներառում է արևմտահայ բնաշխարհիկ մարդու անհատական ճակատագիր և այդ մարդու *մասնակի* ինքնությունը բնորոշող բացահայտումներ՝ հողի, աշխատանքի, արարման, բնության ու մարդու անբաժանելիության և միասնության հարատևություն, մյուս կողմից արտահայտությունն է ողջ արևմտահայությանը հասած *ընդհանրական* ողբերգական կործանումների, որ անդառնալի չարիքի նման կախվեց այդ ժողովրդի մեծագույն հատվածի վրա:

Մնձուրի (բուն անունով՝ Հակոբ Տեմիրճյան, հորական ապուպապը երկաթագործ լինելու հանգամանքով այդ ազգանունն է ընտրվել\*) գրական անունը նրան տվել է արևմտահայ ճանաչված մտավորական, գրող Օսնիկ Չիֆթե-Սարաֆը (Հովհաննես Աբխտղոմոնյան)՝ նկատի ունենալով գրողի ծննդավայրի լեռնաշղթայի անվանումը, իրեն էլ մկրտելով Հովհաննես Ասպետ գրական անվամբ:

Մնձուրին ծնվել է 1886 թ. հոկտեմբերի 16-ին Երզնկա\* գավառի Գորուչայ գավառակի\*\* փոքր Արմտան գյուղում, որը բաղկացած էր

\* Արևմտահայոց մեջ տարածված մի բան էր մականունը բխեցնել զբաղմունքից, մասնագիտությունից:

\*\* Երզնկան Արմտանից ոտքով երեք օրվա հեռավորություն ուներ:

շուրջ յոթանասուն տնից: Կար և երեք հարյուր տնով մեծ Արմտանը, որոնք այնքան էին մոտ, որ կանչելիս իրար լսում էին: Երկու գյուղերն էլ ապրում էին միևնույն համայնական կյանքով: Ինչպես գրում է Մնձուրին իր «Արմտան» գործում, երկու գյուղերի բնակիչներն իրար հեռու ու մոտ բարեկամներ էին. փեսան բոլորի տների համար փեսա էր, «Մորդ մարանց բոլոր տուններուն աղջիկները մորքուրներդ են, անոնց այրերը՝ մորքուրայրերդ, զավակները՝ մորքուրորդիներդ...» (Կապույտ լույս, էջ 92): Գյուղերը գտնվում էին Դերսիմի լեռնաշղթայի (որին տեղացիները Տուժիկի կամ Մնձուրի, Մրգա (այրված, վառված, խարկված) անունն էին տվել) մոտ, որը ձգվում էր Ակնի ուղղությամբ և ուներ Կապույտ լույս կոչվող երկգագաթ լեռը, որը տեղացիներն իբրև սրբավայր էին ընդունում, ձոնում հայրեններ. «Հով մը Մրգայ լեռնէ // Մեր դրան ախլանքը կը ծեծէ»:

Որտեղից իմանար ապագա գրողը, որ հակառակ իր սիրասուն լեռնաշղթայի իր առջև ցցված է մնալու մի ուրիշ անել պատեն՝ իր կյանքի դատը բեռը՝ միշտ խարկված ու մնձրված:

Զարմանալին այն է, որ Մնձուրին կարող էր և չծնվել, այն էլ՝ երկու անգամ, որոնց մասին նա գրում է իր «Կավին դարը» և «Առաջնեկը» գործերում. առաջինում սեպտեմբերի 20-ին իրենով ծոցվոր մորը հանել են փլված հողերի տակից, երկրորդում՝ հոկտեմբերի 16-ին խոտհունձի դաշտերի ամայության մեջ ծննդաբերելուց հետո ուշաթափ մորը և իրեն գտել են աղբյուրի մոտ: Նրա կյանքում եղել է և երրորդ ճակատագրական դեպքը, բայց այդ մասին՝ հետո:

Ինչպես ողջ գյուղը, Տեմուրճենց տան տղամարդիկ պանդխտում էին: Հակորը օգնում է ընտանիքին ինչով կարող էր, հաճախում դպրոց, որը գործում էր թուրքական օրենքներով ու պահանջներով: Եվ երբ դպրոց էին գալիս թուրք պաշտոնյաները, դպրոցականներին երգել էին տալիս թուրքերեն երգեր, որոնց բովանդակությունը, օրինակ, գայմագամի այցելության առիթով այսպիսին էր. «Մեր գաւառակին քաջ գայմագամին, Արդարակորով մեծ Ահմէտ պէկին, եկէք, որ երգենք երգ կենդանութեան, կենացը աղօթենք որ երկար ապրի» (Տեղեր, էջ 79):

Ինչպես իր տարեկիցները, Մնձուրին ձմռանը դպրոց է հաճախել, զարնանը, ամռանը, աշնանը՝ խաղացել, եղել հոտաղ, ապա խոտ ու որան կրող, կալ կամնել, աշխատել արտերում: Արդեն տասը տարեկանում նրա մեջ սկսում է կազմավորվել ապագա գրողը. պատանի Հակորն այլ ձևով է տեսնում ու ընկալում շրջապատն ու երևույթները: Իր տարեկից Նանոյի հետ, երբ Արմտանի դաշտերում ու սարերում ուլեր ու գառներ էր պահում, «հարիւր անգամ... հազար անգամ» լինում նույն տեղերում, այդ նույն վայրերը նրան ամեն օր նոր կողմերով էին բացահայտվում, և նա զարմանք ու հիացմունք էր ապրում. «Այս ձորերը

\*\* Տեղավայրի բաժանման թուրքական պաշտոնական անվանումը «Չորրորդ բանակ» էր:

այսքան՝ կապոյտ էին, հապա լոյսէ՛րը որ կը փայլէին, կը մարէին լեռներուն վրայ:

Աւրզնին ձորը այսքան վա՛ր, այսքան խորո՞ւնկ էր, առուն որ կը յորդէր այսքան շատ ջո՞ւր ունէր» (Մենք, էջ 304):

Այդ օրերին Նանոն ու տասնամյա Հակոբը անգամ **տեսել** են Սուրբ Եղիային, այն էլ երկու անգամ, կիսափուլ մատուռից սուրբը դուրս է եկել ու ներս գնացել. «Վրան ժամու շուրջատ մը, գոռչանէ՛ մը վար թափող առուի մը պէս մինչև գետինը ձերմակ մօրուքով մըն էր: Աստուած վկայ տեսանք» (նույն տեղում, էջ 306):

Այս շրջանում դրսևորվում է նաև ապագա գրողի գրական ճաշակը. «Յորն ալ գի՛րք է,- ասում է նա Նանոյին,- որ պիտի կարդայի, ո՞ր ապուշը այդ գիրքը գրեր է: ... Դանիելի գիրքը պիտի ըլլայ. «Եւ սրնգի, եւ տաղի, եւ քնարի, եւ թմբկի եւ ամենայն ազգոց արուեստականաց ականիջիք եւ երկրպագանջիք: Ա՛յ, գիրքը սա է»» (նույն տեղում):

Գյուղում ամենքը չէ, որ իրենց երեխաներին դպրոց էին ուղարկում: Շատերն այն համոզումն ունէին, որ գրել-կարդալ իմանալը ավելորդ մի բան է: Տարածված այդ մտայնության վերաբերյալ Մնձուրին իր «Մինասենց Գրիգորը» պատմվածքում գրում է իր համագյուղացիների ընդհանրացված համոզումը. «... կարդալ սորվեր նը՝ ի՞նչ պիտի ըլլար... Տեհա մեր գեղին Քերոք պատվելին, թեղուտի Մինաս պատվելին եղեր, ձեր Դավիթ պատվելին եղեր, տուն գլուխ մեկ կոտ ցորեն չտանք նե՛ անոթութենեն պիտի մեռնին, աս չէ՞: Սորվողները ասոնք չէ՛ն: ... Կարդալ սովորեր նը՝ գլուխը թուխ ամպէ՛րը պիտի հասներ...» (Երկեր, էջ 316):

Պատանի Ակոբի համար ուսումը իհարկե այլ նշանակություն ուներ, և նրա գլուխը լեփ-լեցուն էր «թուխ ամպերին» հասնելու որոշումներով:

1897-ին Մնձուրին մեկնում է Պոլիս, այնտեղ վարձավճարով փոապանությամբ զբաղվող Մելքոն և Մարտիրոս պապերի ու հոր՝ Իգնատիուսի մոտ: Առաջին անգամ Պոլիս գնալու մասին, ինչպես Մնձուրու գրականությամբ զբաղվող գրականագետներից ոմանք, այնպես էլ ինքը՝ Մնձուրին, տարբեր թվականներ են նշում՝ 1897, 1898, 1899:

Ճշմարիտը իհարկե 1897-ն է: Ահա թե ինչու: Նախ. տարբեր աղիթներով տարբեր թվականներ նշելով հանդերձ, Մնձուրին քանակական իմաստով շատ ավելի 1897-ն է նշում: Իր «Տեղեր ուր ես եղեր եմ» գրքում զետեղված «Հիսարի փուռը» գրության Բ. մասում, օրինակ, Մնձուրին նորից է նշում նույն թվականը. «Ասոնք իմ 1897-1906 տարիներու պատմութիւններս են» (Տեղեր, էջ 166):

Ուրեմն 11-ամյա Հակոբը Պոլիս է հասել 1897-ին. «Գիւղի հագուստներով էի, կարմիր գոտի մը մէջքս: Նավ նստելէ առաջ տրեխներս նետեցի...»<sup>8</sup>:

<sup>8</sup> «Մարմարա», Իստանպուլ, 1959, ապրիլի 16:



Մնձուրին հումորով է գրում Պոլսում գտնվելու իր առաջին ժամերի մասին: Նրան տանում են պատրաստի հագուստ վաճառողի խանութ: Հանում է գյուղական սալթան (վերնաշապիկը) և տիզիկը (անդրավարտիքը): Գնված հագուստները մեծ էին, լայն ու երկար. «... *ինչքան ալ կոճակներուն տեղերը*» փոխում են, տաքատը սրունքներից տոպրակի մը պէս կախված է մնում. «*Ան ետքէն կը քաշուի*», - ասելով հազցնում են:

Մնձուրին ընդունվում է Օրթագյուղի ֆրանսիական տուն-դպրոց (Էքոլ ֆրանսիզ), որը մասնավոր էր, և որտեղ դասավանդվում էր նաև հայերեն: Երկու տարի այստեղ ուսանելուց հետո մեկ տարի էլ սովորում է Ղալաթիայի Կեդրոնական վարժարանում, որը կիսատ է թողնում: Պատճառը Պեշկեթաշում գտնվող իրենց փոփ տեղափոխումն էր Հիսարի, որտեղ և 1901-ին իրենք են բնակություն հաստատում: Փոփն մոտ էր Ռոպերտ քուլեջը, որտեղ էլ որպես ցերեկօթիկ ուսանող ընդունվում և շարունակում է իր կրթությունը, սակայն այն նույնպես կիսատ է թողնում. «... *հետագան ինչ կ'ուզէ ըլլայ, ձգեցի էլա, առանց աւարտելու*»<sup>9</sup>: Իր ուսումնառության ողջ ընթացքում Մնձուրին դասերից ազատ ժամանակ, այդ թվում նաև զիշերները, աշխատել է փռում, օգնել հորը, հետագայում նաև փոխարինել գյուղ վերադարձած Մելքոն պապին:

Քնում էին հերթով փոփ վառելափայտերից շինված թախտերի վրա: Տեսական ու լարված ուսման այդ շրջանում «*լաւութիւն մը*» կար. օրվա մեջ գալիս էր փուռ ճաշելու. «*Կրնա յի, կըլլա ը, երես չունէի, կ'անչնայի օր մը լոբիա տանիլ, սոխով պղպեղով եփուած, մալեզ եղած. միւս օրը մածունով թանապուր, հացերս մէջը փշրելով, փայտէ գոլալով ուտելու: ... Շքեղ ճաշարանին մէջ, փայլուն սեղաններուն առջեւը կը նստուէ ը, կրնայի նստիլ ամերիկացի ուսուցիչներու և հարուստներու տողոցը կարգը իմ գիւղացիի ճաշովս*» (Տեղեր, էջ 158-159): Ու թէն «*նոր*» էին Մնձուրու հագուստները, սակայն, ինչպես արդեն գրել ենք, իր չափերով չէին և «*ածան կերպասէ ըլլալուն*», չէին արդուկվում: Բայց կար նաև մի այլ բան. Մնձուրին եվրոպական հաստատություն էր այցելում... «*բուրդէ ճերմակ գուլպաներով*», որը նա բարձրացնում էր տաքատի վրա և կապում «*փնջագարդ կապերով*»: Կար նաև կոշիկների հանգամանքը, որոնց մասին խոսելիս Մնձուրու հումորը կատարելության է հասնում: Կոշիկները կարել էին կոշկակար ծանոթ հայեր. «*Ակորֆին անանկ կօշիկ մը շինենք, որ հագնի ու հագնի ու չիիննայ*», - ասել էին նրանք: «*Բնչ կաշիէ էր, գոմէշի էր..., ներբանները կապարէ ... գամերով ծածկեցին, կրունկներուն ալ իբր պայտեր, նալջաներ գամեցին... որոնք ձայն կը հանէին գոլէճին մարմարէ գետիներուն վրայ... քառասմբակ ձիաւոր մըն էի որ կ'անցնէի...*» (նույն տեղում, էջ 159-160):

Մրանց ավելացնենք կարմիր գոտին, որ կապված էր մեջքին:

Կար ուշադրություն գրավող ևս մի բան: Նույն «Տեղեր» գրքի «Պեշկեթաշ-Օրթագիւղ-Հիսար» գրության մեջ Մնձուրին նկարագրում է

<sup>9</sup> Նույն տեղում:

նան իր արտաքինը՝ գրելով, որ գյուղում կային փոքրիկ հայելիներ, որոնք կարող էին ցույց տալ մարդու միայն դեմքը: Պոլսում Հակոբը առաջին անգամ տեսնում է մեծ հայելի և այդ հայելիում՝ իրեն. «... *հայելիին մեջ ամբողջ հասակովս երեւցայ: Հաւատալս չեկա: Աս ե՞ս էի: Ի՞նչ սեւ, ի՞նչ սեւ տեսայ ես զիս: Մանրակազմ ալ ըլլալով սատանայի ձագի կը նմանէի*» (նույն տեղում, էջ 68): Մի խոսքով՝ «խափշիկ մը»:

«Փռապան էինք, իբր թե գործատեր էինք,- պատմում է Մնձուրին: - Շահը այնքան քիչ էր, որ նվազագույն ծախսերով հազիվ հազ էին գործը քալեցնում» (նույն տեղում, էջ 68):

«Ախ սա ըստանպուլցիներուն, որ մեր հացերը կերան ու մեր փարաները չտուին...»<sup>10</sup>:

Ցավն այն չէ, որ «փարաները չտուին», այլ, որ «հացերը կերան», այսինքն՝ իրենց աշխատանքը կերան: Մնձուրու ապրած ժամանակ Ստամբուլի հացի փոերի «հարհիրէն ութունը» հայերն էին աշխատեցնում:

Ուր էլ որ եղավ, Մնձուրին մնաց գյուղացի ու գյուղացի (ինչպէս գրել է, իրոք որ «գիւղացին մեջէն չանցավ»), և դա ոչ միայն իր հագուստներով, մտածողությամբ ու զգացողություններով, այլև... անգամ ուտելիքներով: Իր «Ղալաթիա» գրության Գ. հատվածում Մնձուրին պատմում է Պոլսում սովորելու տարիներին համադասարանցի, հարուստի տղա Գևորգէնց տան նկուղում առաջին անգամ իր տեսած ուտելիքների մասին՝ «ծակ ծակ ու մեղրամոմի գոյն դեղին» պանիր, ռուսական սև խավիար, «գոց թիթեղներով իւղ»:

Մնձուրին ազատորեն գրել և կարդացել է ոչ միայն թուրքերեն, այլև տիրապետել է օսմաներենին: Եվ պատահել է այնպէս, որ քիչ է մնացել նրա առջև բացվելին թուրքական պալատի «Երջանկութեան Տան» դարպասները՝ Երլտրզի կայսրական կանանոցի դռները: Երբ թուրք պալատականը տեսել է «Ժանեակ հիւսելու պէս» գեղեցիկ գրված Մնձուրու թուրքերեն ձեռագիրը, նրան ասել է. «Օլան Ակոբ, մեղք, որ Արմանի ես... Միւսլիման ըլլալու էիր, քեզ սարային Գուրանի հաֆրզ ընել կուտայի» (նույն տեղում, էջ 16):

Գյուղում լինելով առաջավոր աշակերտներից մեկը՝ Պոլսում Հակոբը քոլեջում «միջակ էլ չեղավ»: Պատճառները տարբեր էին՝ լեզվի չիմացությունը (անգլերեն, որին իհարկե հետագայում լիովին տիրապետեց), ուսուցման «գէշ եղանակները»... Իր ուսումնական «անհաջողութիւնները» փոխադարձելու համար նորից ու նորից «ինքզինքը» կարդալուն է տալիս. «Եւ ինչպէ՞ս կը կարդայի: Չէի կշտանար: ... Ան տարիքես սկսայ գատել, քննադատել, բացատրել, եւ ոգեւորիլ ու յորդիլ» (ընդգծ. – Ա. Ա.) (նույն տեղում):

Մնձուրու կյանքի այս շրջանը աչքի է ընկնում առնվազն երեք հատկանիշներով՝ ուսումնառություն, աշխատանք և անհագ ընթեր-

<sup>10</sup> «Մարմարա», Բստանպուլ, 1965, հունվարի 22:

ցանություն: Այն, ինչ չէին տալիս ուսուցիչները, և այն, ինչ չէր տեսնում իր շրջապատում ու կյանքում, նա գտնում է գրքերում: Օտարագգի, արևմտահայ ու արևելահայ գրողների գործերը նրա փնտրած այն հարստություններն էին, որոնցում կար ամեն բան՝ անձանոթ աշխարհներ ու բարքեր, հայրենանվեր գաղափարներ ու պատգամներ, ռոմանտիկ պատրանքներ ու կլանիչ բնապատկերներ, մարդկային տարաբնույթ տիպեր ու կերպավորումներ, կյանքի ու աշխարհի անձի գեղեցկություններ:

Մնձուրին կարդում է Շիրվանզադեի, Բաֆֆու, Լեոյի, Գր. Արծրունու գործերը, արտասահմանյան, տեղական և Կովկասից եկող մամուլ՝ «Մուրճ», «Մշակ», «Անահիտ»... , ֆրանսիական, անգլիական, ամերիկյան, շոտլանդական բազում հեղինակների բնագրեր կամ թարգմանություններ, եվրոպական մամուլ: Նրան հատկապես գրավում են Ջուլան, Տենը, Ֆլոբերը, Տոլստոյը...

Քոլեջի ուսանողներն սկսում են նրան *«փիլիսոփայության սոփոսոփ»* անվանել: Կրթարանի գրադարանում Մնձուրին կարդում է ձեռքն ընկած ամեն ինչ, գրավաճառներից, հին գրքեր ծախողներից գնում գրքեր: *«... կը լեցուէի վեպերով, քերթուածներով, փիլիսոփաներու ըսածներով»* - վկայում է Մնձուրին «Մարմարայում» տպագրած իր «Կենսագրութիւնս» գրության մեջ: Սէնպոլիսթներուն, նաթիւրալիսթներուն օրերն էին:

Զարմանալին այն է, որ ընթերցված այդ ողջ գրականությունը, որը *«կը լեցնէր»* Մնձուրուն, նրա արմտանցու ճաշակը չէին փոխում, *«արմտանցիությունը»* նրանից չէին հանում. *«Իմ գիւղիս արտերը, այգիները, գետափները միտքս որ իյնան, աչքիս բան չերեւար, կը խենթեցնեն գիս»* (նույն տեղում):

Սա չի նշանակում, իհարկե, որ Մնձուրին չէր փոխվում: Ճիշտ հակառակը, իր գյուղացու խառնվածքը և մեծ գրականությունը փոխադարձաբար լրացնում էին միմյանց, հարստացնում ու նպաստում անհատականության ձևավորմանը: *«Գրականութեան նորություն մը չկայ, որ չհրապուրէ գիս»*, - գրել է նա: Հրապուրվել նշանակում էր նաև փոխվել, ազդվել:

*«... Ես տասնըիննիս մէջ էի...»* (նույն տեղում):

Այդ օրերին (1906) «Մասիսում» տպագրվում է նրա առաջին գործը՝ «Հարս և սկեսուր», որն արդեն մատնանշում էր այն աշխարհը՝ գյուղը, որ պիտի լիներ նրա գրականության մշտական ոլորտը: Մնձուրին թարգմանում է Մոկլերի «Այցելութիւն մը Թէնի գերեզմանին» գրությունը, մի պատմվածք Լեւոնտովից:

Մնձուրին չի ծրագրում իր գիտելիքներով դրամ վաստակել. *«... Իսթանպուլ չպիտի մնայի»*:

1906-ին Մնձուրին գյուղից նամակ է ստանում. *«Զիս նշաներ էին»*: Մնձուրուն նշանել էին համագյուղացի Ողբտա անունով աղջկա հետ,

որի հետ մինչ Պոլիս գալը խաղացել էր, գառներ, ուլեր պահել, այն աղջկա, որին, ինչպես և նրա հետ ուլեր պահող մյուս պատանիներին, դաշտում իր ու Նանոյի եփած փլավից *«մէկ գղալէ»* ավել չէին տալիս: Սև աչքերով, սև հոնքերով այդ աղջիկը *«բնաւ»* նրա մտքով չէր անցել: Նրա մտքինը Մանուկանց Մարոն, Բարիկանց Նանոն, Տողանենց Նանոն էին եղել: Մնծուրին Ողըտային վերջին անգամ տեսել էր, երբ նա 11-12 տարեկան աղջնակ էր: Իսկ ինչպիսի՞ն էր նա հիմա... Բայց եղածը եղած էր, չհնազանդվել անկարելի էր: Անշուշտ թե իր հարազատները *«տգեղի մը հետ»* չպիտի նշանեին:

Խոսելով իր նախասիրած աղջիկներից մեկի՝ Տողանենց Նանոյի մասին՝ Մնծուրին գրում է. *«Շատ աղուոր էր, դեղին մազերով: 12 տարեկան էի: Ձարնուեցայ, ինձի նշանի կառնեմ ըսի մտքումս: Աչքս վրան մնաց»* (նույն տեղում, էջ 166):

Այս շրջանում Մնծուրու կյանքում տեղի է ունեցել ևս մի նշանավոր դեպք. 1907-ին նա հանդիպել է Միսաք Մեծարենցին: *«Քու գյուղը Եփրատին աջին է, իմինս՝ ձախին»\**, - ասել է Մնծուրին Մեծարենցին:

Մնծուրին դեռևս ուսման տարիներին էր որոշել գյուղ վերադառնալ: Ծրագրել էր Պուլսում կրթությունն ավարտելուց հետո վարժարանի նպաստով արտասահման մեկնել, այնտեղ ստանալ հիմնավոր բարձրագույն կրթություն և ապա վերադառնալ գյուղ: Բայց դրամի և այլ պատճառներով այդ ծրագիրը չկարողացավ իրականացնել: Ըստ երևույթին, պակաս դեր չեն խաղացել նաև իր նշանվելը, հարազատ մարդկանց նկատմամբ ահագնացած կարոտը:

Խոսելով Արմտան իր վերադարձի մասին՝ Մնծուրին վկայում է, որ *«այն տարիներուս մինչեւ մազերուս ծայրերը ռոմանթիկ էի»* («Մարմարա», 30 ապրիլի):

Այդ հայացքով ու համոզմամբ էլ նա դիտում ու ընդունում է շրջապատը, ապրում ու ծրագրում իր կյանքը, կայացնում նաև *Մեծ վերադարձի* որոշումը:

1907-ի հուլիսին, իր բեռների մեջ ունենալով մի քանի պարկ գիրք, փողկապը վզին, Մնծուրին նախ նավով, ապա ջորիների քարավանով վերադառնում է գյուղ:

Անցնում են օրեր, բայց Մնծուրին մինչև հարսանիքը այդպես էլ չի կարողանում հանդիպել իր հարսնացուին: Իր նշանածին տեսնելու երկու փորձ է կատարում, որոնցից առաջինի դեպքում դաշտերում աշխատող համագյուղացիները զգուշացրել են աղջկան, թե նշանածո արտերի մեջ թաքնված է, և աղջիկը հետ է գնացել, երկրորդի դեպքում Հակոբը, թաքնվելով հաստաբուն տանձենու հետևում, միայն հասցնում

---

\* Արմտանի մասին խոսելիս Մնծուրին մի քանի տեղ է գրում իրենց գյուղը Եփրատի ձախ կողմում գտնվելու մասին, որը սխալ է: Երկու Արմտաններն էլ գետի աջ կողմում են եղել:

է տեսնել նրա հասակը, ծամերը և սև հոնքերը: Անհայտ մի զգացողությամբ աղջիկը *«լերան եղնիկին պէս»* փախչում է, որ չհանդիպի, չխոսի իր նշանածի հետ:

Ակամա մտաբերում ես գրողի «Փշատիին ծաղիկը» պատմվածքի հերոսներ Նշանի և Նարոյի թույլ տված *«մեղքը»*՝ իրար հետ խոսելը, փշատենու ծառի տակ նստելը և Նարոյի մոր ապրած սարսափը գյուղի հնարավոր բամբասանքներից:

Գալիս է հարսանիքի օրը: Հակոբի և Ողբտայի հարսանիքը տևում է յոթ օր, ինչպէս ընդունված էր. «Երեքշաբթիէն մինչև միւս Երկուշաբթի»: Շաբաթ օրը հարսին տուն են բերում, բայց փեսան նրա հետ խոսելու իրավունք չունէր: Երբ հարսանքավորները և *«տավուլ զունան»* գնում են, հարսին ծանոթացնում են տան մասերին. *«... սա ձեր հաց եփելու թոնիրն է, ... սա ձեր այրատունն է, ... սա ձեր խաղող թնթելու (ճմռելու. – Ա. Ա.) հնձանն է, ... սա ձեր մատանն է... սա ալ քու օտաղ է, նշանածիդ օտան է... »* (նույն տեղում):

Այսպէս մինչև 1914 թ. Մնձուրին մնացել է գյուղում, կատարել ամենազանազան աշխատանքներ, նաև ուսուցչություն\* արել *«իր կերպերովը»*, որտեղ թիվ չկար, գնահատական չկար, դասագիրք չկար, քննություններ չկային... Աշակերտներին սովորեցրել է իր տեսնելու, եզրակացնելու եղանակները, իր կարդացածներն ու իմացածները: Ուսուցիչ (պատվելի) Մնձուրին ինքն էր բացատրում դասը, ինքն էլ պատասխանում. *«Լաւ ուսուցիչ մը եղայ, նոյնիսկ ալ աւելի լաւ ուսուցանող մը»* (Տեղեր, էջ 186):

Մնձուրին իր հետ արտ ու այգիներ է տարել անգլիական ու ֆրանսիական գրողների գործերը. *«Պալգաքը, Ֆլոպերը իրենց բնաւ չզացած, իմ տանելէս ետքը ալ անգամ մըն ալ իրենց երբեք չերթալիք տեղերը իմ այգիներուս մէջ պտտցուցի»* (նույն տեղում):

Արտքաղին Մնձուրին, շաբաթներով աշխատելով դաշտերում, նաև ստեղծագործել է՝ *«ալոճի մը շուքը քաշուած»* կամ գիշերային աստղերի և ծղրիդների համերգի ներքո, ունկնդիր գիշերային ձայներին, կաքավների խմբերգերին. *«Ես աչքերս լեցուցի բոլոր տեսածներովս, զոր գրեցի կամ պիտի գրեմ»*:

Մնձուրու ծրագիրը հստակ էր ի սկզբանե. կրթություն ստանալ, վերադառնալ գյուղ:

Գյուղում գործելու Մնձուրու որոշումն ուներ իր հիմնավոր պատճառները՝ *«պապենական տունը»* չփակելու համոզումը, իրեն հարազատ մթնոլորտում գտնվելու իրողությունը և այլն, որոնց մեջ երկրորդական չէր գրականության նկատմամբ ունեցած հայացքները. *«Գրող*

---

\* Ուսումը կիսատ թողնելու պատճառով Մնձուրին Պոլսում չստացավ ուսուցչի վկայական: Եղածը ուսուցչի օգնականի վկայականն էր, որը նրան տվել էր Երզնկայի ուսումնական խորհուրդը:

*մը ըլլալու իմ տենչերս կային: Գիւղը իմ ամէն ազատութիւնս կուտար ինծի: Իմ ամէն ծամերս իմս պիտի ըլլային: Գրելու, կարդալու, ընելու ինչ որ կ'ուզեմ: Պոյտ մէջ փաշա մըն ալ ընէին զիս, ծառայութիւն էր վերջ-ապէս, ես զիս պիտի չըլլայի» (ընդգծ. – Ա. Ա.) (նույն տեղում, էջ 182):*

Ուրեմն՝ գրող ու մտավորական, գյուղացի ու աշխատավոր՝ ոգևորիչ մի ծրագիր, որը և նա սկսել էր իրականացնել իր վերադարձից հետո:

Ինչպէս մյուս գյուղացիները, Մնձուրին նույնպէս «տրէխները ոտքերին» արտ է վարել ու ցանել, այգիները ջրել, ցորեն ու խոտ հնձել, այգեթաղ, այգեկոյթ կատարել, աշնանը վառելու փայտ բերել, ձմռանը ոչխարներին կերակրելու համար անտառից «տել» (կաղնեճյուղեր) կրել՝ միշտ փողկապը վզին, և շարունակել կարդալ:

Մնձուրու գրական ներշնչանքները խորացան գյուղական աշխատանքներից զուգահեռ. «... գյուղի գիշերներս, հովուերգութիւնս արտերը գրեցի, ամէն անգամ որ մանգաղը կը ձգէի, այրձի մը շուքը կը քաշուէի, ցերեկուան տիւանդորներուս կամ իրիկունները պատկելէ առաջ... անգլիական թարգմանութիւններուս վրայէն Թոլսթո կարդացի լերան սկաւառակներու մեր արտերուն մէջ» (նույն տեղում):

Գյուղում Մնձուրին չորս զավակ ունեցավ՝ երկու տղա, երկու աղջիկ: Մնձուրին փափագում էր ևս չորսը ունենալ: Տեմուրճենց չորս տների մէջ իրենցը ամենասակավամարդն էր՝ պապը, հայրը, մայրը, կինն ու ինքը\*:

Իր մահվանից (1978 թ.) մեկ տարի առաջ գրած «Կենսագրութիւնս» գործում, որը ներառում է 1914 թ. աշնանից մինչև 1977 թ. ամառը, և որը հեղինակն անվանում է իր կենսագրության երկրորդ մասը, Մնձուրին գրում է, որ արտքաղը ավարտելուց հետո՝ 1914-ի օգոստոսի վերջերին, «գիւղ իջանք, տուն մտանք» (նույն տեղում, էջ 167):

Հետո պիտի գային ձմռան երկար օրերը, այն, որ «Քրոջ սէր» պատմվածքում Մնձուրին բնութագրում է. «... նստելով օրը իրիկուն կընէինք»: Բայց մի ուրիշ սարսափելի «ձմեռ» եկավ, և մի ուրիշ խավար իջավ ամենքի գլխին՝ գյուղի, ժողովրդի և հենց Մնձուրու:

**АРЦУН АВАГЯН – Великий свидетель Маленького Армтана.** – В статье всесторонне рассматривается начальный период жизни классика армянской литературы диаспоры Акопа Мндзури на основе прессы предыдущего века, биографических материалов и художественных произведений писателя, которые представлены впервые. Сделан обзор периода его жизни, проведенного в родном селе, затем в Стамбуле и вновь в родном крае (1886-1914). В статье речь идет о провинции Ерзнка Западной Армении, ряде ее селений, и особенно об Армтане и его жителях, о быте, национальных обычаях, человеческих отношениях, а также о творчестве писателя. Также представлен период его жизни до Первой мировой войны.

В статье делается акцент на насыщенную событиями жизнь молодого Акопа,

---

\* Մնձուրին ունեցել է նաև երեք քույրեր, որոնք ամուսնանալուց հետո հիվանդության պատճառով մահացել են շատ վաղ:

позитивно сформировавшую образ будущего великого писателя, прожившего жизнь в стране, которой уже нет, где мирные люди видели смысл жизни в творчестве и труде.

Статья содержит богатый материал, связанный с жизнью западных армян, раскрывающий идейно-художественные достоинства произведений Акопа Мндзури.

**Ключевые слова:** *Акоп Мндзури, свидетельство, Армтановские сады, сохранение нации, западноармянская литература XX века, имиджетворчество*

**ARCRUN AVAGYAN – *The Great Witness of Little Armtan.*** – The article comprehensively examines the initial period of the life of Hakob Mndzuri, a classic of Armenian literature of the Diaspora, based on the press of the previous century, biographical materials and works of the writer, which are presented for the first time. A review of the period of his life, spent in his native village, then in Istanbul and again in his native land (1886-1914) has been made. The article is about the Yerznka Province of Western Armenia, a number of its villages, and especially Armtan and its inhabitants, about life, national customs, human relations, as well as writer's career. The period of his life before the First World War has been also presented.

The article focuses on the eventful life of young Hakob, which gradually formed the image of the future great writer, who lived his life in a country that no longer exists, where peaceful people saw the meaning of life in creativity and work.

The article contains rich material related to the life of Western Armenians, revealing the ideological and artistic merits of the works of Hakob Mndzuri.

**Key words:** *Hakob Mndzuri, witnessing, Armtan gardens, preservation of the nation, Western Armenian literature of the 20<sup>th</sup> century, image creation*